Արձանագրություն N 2

«ԱՐՁՆԻՀ-ԳՀԾՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Արզնի 23 օգոստոսի, 2021թ.

Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Զ. Նադոյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Հարությունյանը և Կ. Իսակովա
Հանձնաժողովի քարտուղար ՝ Մ. Մովսիսյան

## I. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Զ. Նադոյան)

1.1. **Ընդունել ի գիտություն, որ.**

Հայտերի բացումը տեղի է ունեցել 2021թ. -ի օգոստոսի 16-ին, ժամը 10:45-ին: Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| հ/հ | Կազմակերպության անվանումը | Հասցեն |
|---|---|---|
| 1 | «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ | ՀՀ ք. Արթիկ, Բաղրամյան1/2<br>Էլ. փոստ՝ knyazyanvvs@mail.ru |
| 2 | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 54Բ<br>Էլ. փոստ՝ ekspertizaproektov@mail.ru |

1.2. Հայտ պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունն հրավերով սահմանված կարգին.

Մասնակիցների կողմից ներկայացրած ծրարները համապատասխանում են հրավերով նախատեսված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.3. Բացված ծրարներում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին

Բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.4. Հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

1.4.1 «ԱՐՋՆԻՀ-ԳՀԾՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինն է.

| Չափաբաժին | Անվանումը | Նախահաշվային արժեք /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| *1* | ***ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի արտաքին լուսավորության ցանցի իրականացման աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություններ*** | **553 120** |

1.4.2 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները /պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով/.

| *Չափաբաժին No.* | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ | 450 000 | 0 | 450 000 |
| 2 | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | 320 000 | 64 000 | 384 000 |

1.4.3 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**1.5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին.**

Հրավերի վերաբերյալ պարզաբանման հարցումներ չեն ստացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

## II. Ընտրված մասնակցին որոշման և հայտարարության մասին

---------------------------------------------------------------------------

(Զ. Նադոյան)

2. Հայտերը գնահատվել է «ԱՐՋՆԻՀ-ԳՀԾՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել են «Բավարար»:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

2.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.4.2–րդ կետը՝ հայտ ներկայացրած բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԾՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

### III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

----------------------------------------------------------------------------

(Զ. Նադոյան)

3. Հանձնաժողովը որոշեց.

ա) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հրապարակել տեղեկագրում:

գ) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

### IV. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

----------------------------------------------------------------------------

(Զ. Նադոյան)

4. «ԱՐԶՆԻՀ-ԳՀԾՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, ՀՀ Կոտայքի մարզ, գ.Արզնի, 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6 համայնքապետարանի վարչական շենք N-1 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝
Զաիլ Նադոյան

Հանձնաժողովի անդամներ՝
Նելլի Հարությունյան

Կլարա Իսակովա

Հանձնաժողովի քարտուղար՝ Մարի Մովսիսյան